

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ:
ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ
ՍԵՄԻՆԱՐ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Իրավագիտությունը գիտություն է իրավունքի մասին:

Իրավունքը զարգանում է հասարակական կյանքին զուգընթաց և իրենից ենթադրում է զարգացման անընդհատություն: Իրավունքի զարգացման հետ մեկտեղ առաջանում է իրավաբանական կրթության բարեփոխումների անհրաժեշտություն:

Նշված բարեփոխումների իրականացման համար՝ հայաստանյան տարբեր կառույցներ համագործակցում են օտարերկրյա կազմակերպությունների հետ և մասնակցում դրանց կողմից կազմակերպված ծրագրերին: Դրանցից են ABA/CEELI Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան գրասենյակը, Բեառինգ Փոյնթ ԱՄՆ ՄՁԳ տնտեսական կարգավորման ծրագիրը, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության հայաստանյան գրասենյակը (ԵԱՀԿ), Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Կլոր սեղան հիմնադրամը, ABA/ROLI հայաստանյան ներկայացուցչության գրասենյակը:

Նշված կազմակերպությունների կողմից ՀՀ տարածքում իրականացվում են մի շարք միջոցառումներ՝ նպատակ հետապնդելով բարելավել հայաստանյան իրավաբանների կրթության մակարդակը՝ համապատասխանացնելով դրանք եվրոպական չափանիշներին:

Օրինակ.

ABA/CEELI Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան գրասենյակի աջակցությամբ՝ 2005թ. հրատարակվել է ՀՀ դատավորի վարքագծի կանոնագիրքը, Բեառինգ Փոյնթ ԱՄՆ ՄՁԳ տնտեսական կարգավորման ծրագրի հետ համագործակցության արդյունքում՝ հրատարակվել է «Բաժնետիրական իրավունք» ձեռնարկը, ՀՀ տնտեսական դատարանի վճիռների և որոշումների ժողովածուի երկրորդ հատորը, իսկ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Կլոր սեղան հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում՝ հրատարակվել են

«Դավանանքի իրավունք», «Կրթության իրավունք», «Արդարադատության մատչելիություն» ձեռնարկները:

ABA/CEELI Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան գրասենյակի հիմնադրումը Կենտրոնական Ամերիկյան իրավաբանների ասոցիացիայի ծրագրի արդյունք է: Ծրագրի նպատակն է Կենտրոնական Եվրոպայի, Եվրասիայի և նախկին ԽՍՀՄ երկրներում, իրավական բարեփոխումների գործընթացին աջակցելու միջոցով, ամրապնդել օրինականությունը և իրավակարգը: Այդ նպատակով՝ ABA/CEELI-ն աջակցում է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիային՝ կազմակերպելու «Ֆ.Ջեսսպի անվան միջազգային իրավունքի դատախազ» մրցույթի հայաստանյան մրցափուլը և հոգում է միջազգային մրցափուլին հայաստանյան թիմի մասնակցության ծախսերը:

ABA/ROLI հայաստանյան ներկայացուցչության գրասենյակը, որը հավատարմագրված է ՀՀ փաստաբանների պալատի կողմից, փաստաբանների պալատի անդամների համար կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ՝ խթանելով այնպիսի հարցերի վերաբերյալ իրավաբանական գիտելիքների ամրապնդումը և զարգացումը, ինչպիսիք են Սահմանադրական դատարան դիմելու չափորոշիչները, Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու չափորոշիչները:

Եվ այսպես, կարելի է փաստել, որ օտարերկրյա կազմակերպություններից ձեռք բերված գիտելիքները և փորձի մասին տեղեկությունները, անկասկած, հիմք են հանդիսանում ՀՀ-ում իրավական կրթության զարգացման համար, ինչն իրենից ենթադրում է որակյալ մասնագետների կերտում և հետագայում որակյալ իրավաբանական ծառայությունների մատուցում:

Կարեն Տոնոյան

ՀՀ փաստաբանների պալատի երիտասարդական խորհուրդ